ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՔԱՂԱՔԱՇԻՆՈՒԹՅԱՆ ԿՈՄԻՏԵ

Ն Ա Խ Ա Գ Ա Հ

Հ Ր Ա Մ Ա Ն

«18» 12 2025 թ. N 223-Ա

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՔԱՂԱՔԱՇԻՆՈՒԹՅԱՆ ԿՈՄԻՏԵԻ ՆԱԽԱԳԱՀԻՆ ԿԻՑ ՀԱՍԱՐԱԿԱԿԱՆ ԽՈՐՀՐԴԻ ԿԱԶՄՈՒՄ ԸՆԴԳՐԿՎԵԼՈՒ ՀԱՄԱՐ ՆԵՐԿԱՅԱՑՎԱԾ ՀԱՅՏԵՐԸ ՄԵՐԺԵԼՈՒ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ

Ղեկավարվելով Հայաստանի Հանրապետության վարչապետի 2025 թվականի սեպտեմբերի 22-ի N 835-Լ որոշմամբ հաստատված N 4 հավելվածի (այսուհետ՝ Հավելված) 12-րդ կետով՝

Հ Ր Ա Մ Ա Յ Ո Ւ Մ Ե Մ

1. Մերժել Հայաստանի Հանրապետության քաղաքաշինության կոմիտեի (այսուհետ՝ Կոմիտե) նախագահին կից հասարակական խորհրդի կազմում ընդգրկվելու համար հետևյալ հայտատուների կողմից ներկայացված հայտերը.

1) հայտատու իրավաբանական անձ «Հայաստանի անշարժ գույքի գործակալությունների ասոցիացիա» հասարակական կազմակերպության հայտն այն հիմնավորմամբ, որ ներկայացված փաստաթղթերը չեն համապատասխանում Հավելվածի 6-րդ կետի 1-ին ենթակետով սահմանված պահանջներին, մասնավորապես՝ առկա չեն տվյալներ Կոմիտեի օրենսդրությամբ նախատեսված հիմնական ոլորտներում վերջին հինգ տարվա ընթացքում տվյալ ոլորտի առնվազն երեք տարվա գործունեության փորձի և այդ ժամանակահատվածում տվյալ ոլորտում իրականացված առնվազն երկու ծրագրի վերաբերյալ: Ներկայացված փաստաթղթերի ցանկում բացակայում է Հավելվածի 8-րդ

կետի 1-ին ենթակետով նախատեսված հայտատու իրավաբանական անձ «Հայաստանի անշարժ գույքի գործակալությունների ասոցիացիա» հասարակական կազմակերպության կանոնադրության պատճենը.

2) հայտատու իրավաբանական անձ «Հայաստանի հաշվապահների ասոցիացիա» հասարակական կազմակերպության հայտն այն հիմնավորմամբ, որ ներկայացված փաստաթղթերը չեն համապատասխանում Հավելվածի 6-րդ կետի 1-ին ենթակետով սահմանված պահանջներին, մասնավորապես Կոմիտեի համապատասխան օրենսդրությամբ նախատեսված հիմնական ոլորտներում վերջին հինգ տարվա ընթացքում տվյալ ոլորտի առնվազն երեք տարվա գործունեության փորձի առկայություն և այդ ժամանակահատվածում տվյալ ոլորտում առնվազն երկու ծրագրի իրականացում.

3) հայտատու ֆիզիկական անձ Արմեն Աշոտի Մուրադյանի հայտն այն հիմնավորմամբ, որ այն չի համապատասխանում Հավելվածի 6-րդ կետի 2-րդ ենթակետով սահմանված պահանջներին, մասնավորապես Կոմիտեի օրենսդրությամբ նախատեսված հիմնական գործունեության ոլորտում իրականացված առնվազն երկու ծրագրի վերաբերյալ տվյալները բացակայում են (ոլորտին առնչվող ծրագրեր, փորձագիտական աշխատանքներ, ներգրավվածություն Կոմիտեի կողմից ձևավորված աշխատանքային խմբերի, հանձնաժողովների աշխատանքներին, ոլորտին առնչվող հարցերով համագործակցություն միջազգային կազմակերպությունների հետ և այլն).

4) հայտատու ֆիզիկական անձ Շահեն Զոհրաբի Շահինյանի հայտն այն հիմնավորմամբ, որ ներկայացված փաստաթղթերը չեն համապատասխանում Հավելվածի 6-րդ կետի 2-րդ ենթակետով սահմանված պահանջներին, մասնավորապես՝ փաստաթղթերում առկա չեն բավարար տվյալներ առ այն, որ Շահեն Զոհրաբի Շահինյանը մասնակցել է տվյալ ոլորտում իրականացված առնվազն երկու ծրագրի (ոլորտին առնչվող ծրագրեր, փորձագիտական աշխատանքներ, ներգրավվածություն Կոմիտեի կողմից ձևավորված աշխատանքային խմբերի, հանձնաժողովների աշխատանքներին, ոլորտին առնչվող հարցերով համագործակցություն միջազգային կազմակերպությունների հետ և այլն).

5) հայտատու ֆիզիկական անձ Էվլին Վահիկի Օրդուխանյանի հայտն այն հիմնավորմամբ, որ ներկայացված փաստաթղթերը չեն համապատասխանում Հավելվածի 6-րդ կետի 2-րդ ենթակետով սահմանված պահանջներին, մասնավորապես՝ փաստաթղթերում առկա չեն բավարար տվյալներ առ այն, որ Էվլին Վահիկի Օրդուխանյանը մասնակցել է տվյալ

ոլորտում իրականացված առնվազն երկու ծրագրի (ոլորտին առնչվող ծրագրեր, փորձագիտական աշխատանքներ, ներգրավվածություն Կոմիտեի կողմից ձևավորված աշխատանքային խմբերի, հանձնաժողովների աշխատանքներին, ոլորտին առնչվող հարցերով համագործակցություն միջազգային կազմակերպությունների հետ և այլն).

6) հայտատու ֆիզիկական անձ Թամարա Պարգևի Մանուկյանի հայտն այն հիմնավորմամբ, որ ներկայացված փաստաթղթերը չեն համապատասխանում Հավելվածի 6-րդ կետի 2-րդ ենթակետով սահմանված պահանջներին, մասնավորապես՝ փաստաթղթերում առկա չեն բավարար տվյալներ առ այն, որ Թամարա Պարգևի Մանուկյանը մասնակցել է տվյալ ոլորտում իրականացված առնվազն երկու ծրագրի (ոլորտին առնչվող ծրագրեր, փորձագիտական աշխատանքներ, ներգրավվածություն Կոմիտեի կողմից ձևավորված աշխատանքային խմբերի, հանձնաժողովների աշխատանքներին, ոլորտին առնչվող հարցերով համագործակցություն միջազգային կազմակերպությունների հետ և այլն):

12/18/2025

X

ԵՂԻԱԶԱՐ ՎԱՐԴԱՆՅԱՆ

Signed by: VARDANYAN YEGHIAZAR 2614790133

Ե. ՎԱՐԴԱՆՅԱՆ